# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 3

## ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

(Համաձայն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/30 որոշման)
N ԿՄՋԳ-ԳՀԱՇՁԲ-17/3 ծածկագրով գնանշման հարցմամբ գնահատող հանձնաժողովի նիստի

գ. Ջրվեժ «08» «սեպտեմբերի» 2017թ.
ժամը 10:30

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մարգարյան,
Հանձնաժողովի անդամներ՝ Ս.Թադևոսյան, Գ.Բաղալյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Պետրոսյան

Հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 07.09.2017 թվականի N15 կարգադրությունը, համաձայն ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/30 որոշման, դադարեցվել է ԿՄՋԳ-ԳՀԱՇՁԲ-17/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի կողմից 2017 թվականի հուլիսի 27-ի թիվ 3 արձանագրությամբ «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ի հայտը մերժելու, ինչպես նաև «Արգոհշին» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու որոշումը:

1. ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն կարգի 47-րդ կետի համաձայն էլեկտրոնային եղանակով ծանուցել մասնակցին առաջարկելով մինչև 2017 թվականի սեպտեմբերի 12-ը ներառյալ ներկայացնել արձանագրված անհամապատասխանությունների շտկումներ:

Մասնավորապես.

«Ֆինանսական միջոցներ» - չափանիշի գնահատման համար ներկայացնել ՀՀ կառավարության ՊԵԿ-ի կողմից տրված տեղեկատվություն հայտը ներկայացնելու օրվա՝ 2017 թվականի հուլիսի 19-ին նախորդող՝ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարի վերաբերյալ:

«Մասնագիտական փորձառություն» - չափանիշի գնահատման համար առաջարկվում է ներկայացնել լրացուցիչ հիմնավորող փաստաթղթեր (առկայության դեպքում):

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի մասին» թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 67-րդ կետը, հաշվի առնելով, որ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/30 որոշման համաձայն «Աշոտ և Հայկ եղբայրներ» ՍՊԸ-ն ՀՀ ԿԱ ՊԵԿ է ներկայացրել 2016 թվականի 4-րդ եռամսյակի ավելացված արժեքի հարկի ճշգրտված հաշվարկ, ըստ որի ընկերության համախառն եկամտի ծավալը հաշվետու ժամանակահատվածում կազմել է 18880308 ՀՀ դրամ, «Ֆինանսական միջոցներ» չափանիշի մասնագիտական գնահատման նպատակով առաջարկել Ջրվեժ համայնքի ղեկավար Ռ.Պետրոսյանին ՀՀ կառավարության ՊԵԿ-ից ստանալու գրավոր եզրակացություն.

1) Ընկերության ճշգրտված հաշվարկի ներկայացման ամսաթվի և գումարի վերաբերյալ,

2) Ինչքան է կազմել Ընկերության նախորդ երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը հայտը ներկայացնելու օրվա՝ 19.07.2017 թվականի դրությամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

3. Գնահատող հանձնաժողովը՝ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն ՀՀ կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել՝ «Աշոտ և Հայկ եղբայրներ»ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցների» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ հարցում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4. Նիստը ընդհատվում է մինչև ՀՀ կառավարության ՊԵԿ-ից գրավոր եզրակացություն ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 10:30-ը, հասցեն՝ Ջրվեժի համայնքապետարան՝ գ. Ջրվեժ, Մելքոնյան 76:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Մարգարյան

Անդամներ՝ Ս.Թադևոսյան

Գ.Բաղալյան

Քարտուղար՝ Ա.Պետրոսյան